այնուամենայնիւ ես աշխատեցի պատկերացնել այն, ինչ որ կար և գոյութիւն ունէր, և եթէ դրանով կարողացայ Քեզ որոշ գաղափար տալ, ինձ շատ երջանիկ եմ զգում։

Նկարագրութիւնից տեսար, թէ այստեղ բնութեան ծոցը որքան հարուստ է, ինչքան հրաշալի և գեղեցիկ։ Ա՛խ բնութիւն՜ը, ես երբէք չեմ մոռանալ . . . Թոյլ տուր սիրելիս, որ Քեզ նկարեմ մի քանի պանօրամա այդ գեղանկարից։

Երեկոյ է, գարնանային սքանչելի երեկոներից մէկը։ Դուրս եմ գալիս գիւղական խրճիթից և անցնում ուռենիների և բարդիների տնկարաններով պճնազարդուած մի փոքրիկ առուակի եզրով, որը ոլոր-մոլոր պտոյտներով տանում է ինձ դէպի պճնազարդ և լայնարձակ դաշտավայրերը, դէպի կանաչ արտերը, որոնք ծովի նման փռուած են իմ առաջ հպարտ ու գեղեցիկ։ Մի պահ քայլում եմ այդ կանաչազարդ հարթութեան վրայ։ Երեկոյեան անուշ հովիկը մեղմիւ փչում է, որի առաջ այնքան զգուշութեամբ, այնքան մեղմ շարժումներով խոնարհւում են կանաչազարդ դաշտավայրերը և նորից բարձրանում։ Արտերի հողից հանդարտիկ անցնում է մի կարկաչուն վտակ, որն օձապտոյտ ոլորներով վազում է դէպի մօտակայ դաշտավայրերը ոռոգելու։ Այստեղ, կանաչ ափին հաճելի է նստել և լսել վտակի մեղմ քչքչոցը։ Նըստում եմ և ականջ դնում նրա համերգին. դա յիշեցնում է ինձ գիշերային լռութեան մէջ հեւացող ծովը։ Վտակն ու հովիկն իրար հետ միացած մի հրաշալի ամբողջութիւն են կազմում։ Շարունակում եմ ճանապարհս ընդարձակ ու խաղաղ բնութեան ծոցում։ Ահա աչքիս ընկաւ մի գիւղացի. 23—25 տարեկան, առողջ և հուժկու կազմուածքով, բարձրահասակ, լայն ու բաց ճակատով, նոր բուսած ընչացքով, հաստ, ջլուտ բազուկներով և լեցուն կրծքով մի ջահել է նա, որ բահն ուսին դրած լուռ ու մտածկոտ քայլում է վտակի եզրից. նա մի բոպէ կանգ առաւ, նայեց հեռուն, ապա անցաւ վտակի միւս եզրը, բահը ցած բերեց և սկսեց ջրի ընթացքը դարձնել դէպի արտերը։ Ես քայլում եմ